ՄԱՅՐԵՆԻԻ (ընթերցանության) ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ

(2024-2025 ուստարի)

(Տևողությունը՝ **150** րոպե)

6-րդ դասարան

Կախարդական գրադարանը

(Ըստ՝ Հայկ Աջապահյանի)

Անին և Դավիթը սովորում էին թիվ 19 դպրոցի 6-րդ դասարանում: Դա հատուկ երկարօրյա դպրոց էր, որտեղ երեխաները կարող էին մնալ դասերից հետո ու զբաղվել դպրոցի առարկաների հետ կապ չունեցող հազար ու մի հետաքրքիր բաներով: Դպրոցը հայտնի էր ուսուցման իր նորարարական մեթոդներով և տարբեր ոլորտի խմբակներով՝ նախատեսված բոլոր տարիքային խմբերի համար:

Հետաքրքիր ու կլանիչ դասերի ընթացքում Անին կարողանում էր դրսևորել իր ստեղծագործական միտքը: Նրա սիրած առարկան կերպարվեստն էր, որի ժամանակ սիրում էր հայկական առասպելներին ու հեքիաթներին կենդանություն տվող պատկերներ նկարել: Դավիթն էլ մաթեմատիկայի աստղն էր իր դասարանում: Բարդ խնդիրներ լուծելու նրա ունակությունը հիացնում էր ուսուցիչներին ու համադասարանցիներին:

Այդ օրը, ինչպես և միշտ, Անին ու Դավիթը դասերից հետո գնացին դպրոցի գրադարան: Գրադարանը նրանց երկրորդ տունն էր: Գրադարանում նրանք անցնում էին գրադարակների շարքերի միջով, որտեղ յուրաքանչյուր գիրք նրանց շշնջում էր իր գաղտնիքները:

….Առավոտը Երևանում հանգիստ էր ու զով: Անին ու Դավիթը, մտովի պատկերացնելով նոր օրվա խոստացող արկածները, դպրոց ճանապարհվեցին: Գրադարանավարուհի Տաթևիկը նրանց դիմավորեց գրադարանի շեմին՝ իր իմաստուն հայացքով ու բարի ժպիտով:

- Բարի լո՛ւյս,- ողջունեց նա երեխաներին: - Այս ի՞նչ եք անում այստեղ՝ դեռ օրը չբացված:

- Մենք տեղեկություններ ենք փնտրում դպրոցի մասին, ինչ-որ արտասովոր բան,- պատասխանեց Անին:

- Փնտրեք կաշվե կազմով գրքի մեջ,- ասաց Տաթևիկը:

Նրանք մոտեցան հին դաշնամուրին: Անին մաքրեց ստեղների վրա նստած փոշին և սկսեց նվագել: Երբ հնչեց վերջին նոտան, պատը սկսեց դանդաղ շարժվել՝ բացելով նեղ ու մութ միջանցքը… Մուտքը… Մուտքը դեպի ինչ-որ տեղ: Միջանցքի վերջում երևում էր սենյակը: Ամեն ինչ նման էր գանձերի մասին ֆիլմերի: Երեխաները չէին հավատում, որ այդ ամենը տեղի է ունենում իրականում: …..Դուռը բացվեց, և նրանք հայտնվեցին մի աշխարհում, որտեղ միահյուսվել էին տարածությունն ու ժամանակը: Նրանք չգիտեին՝ ինչքան մնացին այդ անիրական աշխարհում: Նրանք չհասկացան, թե ինչպես վերադարձան դասարան: Հանելուկը լուծելու համար նրանք որոշեցին դիմել գրադարանավարուհուն. չէ՞ որ հենց նա էր հուշել իրենց, թե ինչպես պետք է գտնել գաղտնի սենյակը: Տաթևիկը նրանց դիմավորեց զարմանքով. նա վստահ էր, որ Անին ու Դավիթը կգան, բայց այդքան վաղ չէր սպասում:

- Մենք գտանք գաղտնի սենյակը. այնտեղ կախարդանք էր, հրաշքների խաղ, բայց զանգը հնչեց, դուռը փակվեց, մենք հազիվ հասցրինք դուրս պրծնել:

- Ես գիտեի, որ այս օրը կգա, ուրեմն՝ դուք պատրաստ եք իմանալ ավելին, և ես ձեզ կօգնեմ։
Երեխաները չէին հավատում իրենց ականջներին… Մեծերից ինչ- որ մեկը հավատաց իրենց… Որքա՜ն կարևոր է երեխաների համար, որ իրենց լուրջ ընդունեն…
- Նվագե՛ք այն մեղեդին, որ երեկ էիք նվագել։
Անին նստեց դաշնամուրի դիմաց և նվագեց։ Վերջին նոտայի հետ դուռը բացվեց։
- Դուռը բացվում է միայն դասամիջոցին, բայց դուրս կարող եք գալ ցանկացած պահի,- ժպտալով ասաց Տաթևիկը։
-Այս սենյակը պահպանում է շատ գաղտնիքներ, յուրաքանչյուր առարկա ունի իր ուժը։ Այս արձանիկները տարբեր ժամանակների հերոսների հետ հանդիպելու բանալիներ են։ Արձանիկն ակտիվացնելու համար պետք է ասել հատուկ հմայիլը, որը կապված է դրա պատմության հետ։ Տիգրան Մեծի արձանիկն ակտիվացնելու համար պետք է արտասանել «Ուժ ու պատիվ» բառերը, իսկ իմաստուն Մեսրոպ Մաշտոցի արձանիկի համար պահանջվում են «Գիտելիք և լույս» բառերը։ Այդ հմայիլներն արտասանելուց հետո պետք է միայն ձեռք տաք արձանիկին և պատկերացնեք այն վայրը, որտեղ ուզում եք հայտնվել։ Եվ հիշե՛ք՝ մոգությունն աշխատում է այն ժամանակ, երբ իսկապես հավատում եք դրան։ Հարգանքով և զգուշությամբ օգտագործեք այս առարկաները, և դրանք կբացեն ձեր առջև նախնիների դռները։
Երեխաները երկյուղածությամբ մոտեցան Տիգրան Մեծի արձանիկին։
- Ուժ ու պատիվ,- կամաց ասաց Դավիթը՝ մի ձեռքով բռնելով քրոջ ձեռքը, մյուսը դնելով բրոնզե սառը արձանիկին. ժամանակի պտույտը դադարեց, և երեխաները հայտնվեցին գողտրիկ մի այգում՝ եզերված գեղեցիկ զարդանախշերով պատված ցանկապատով։
Երեխաները մոտեցան քարե ցանկապատին, որտեղ նաև քարե մեծ սեղան էր դրված։
Նրանց առջև բացվեց հիանալի մի տեսարան։ Կառուցվում էր մի ամբողջ քաղաք։
Վեհաշուք պալատներ՝ հաստ ու սլացիկ սյուներով, գեղեցիկ կամարաձև տանիքով տաճար՝ պատված սրբատաշ սպիտակ մարմարով, և լայն փողոցներ՝ դեռ մասամբ սալարկված։ Հանկարծ այգու հակառակ կողմից հագուստի խշխշոց և մետաղների զրնգոց լսվեց։ Երեխաները զարմացած շրջվեցին ու տեսան… Տիգրան Մեծին՝ փոքրաթիվ թիկնազորով շրջապատված։ Արքան, ասես հյուրերը բոլորովին էլ անկոչ չէին, ժպտաց։ Նա բարձրացրեց ձեռքը, որում ինչ-որ գլանաձև թղթի կապոց էր պահել ու սաստեց արդեն թրերը մերկացնող թիկնապահներին։ Արքան հրահանգեց նրանց հեռանալ ու թողնել իրեն եկվորների հետ առանձին։
- Բարի՛ գալուստ, պատանի ճամփորդներ, ուրախ եմ տեսնել, որ կախարդական գրադարանի աշակերտները շարունակում են գալ ինձ մոտ դարերի միջով։
Անին, քաջություն հավաքելով, պատասխանեց.
- Ձերդ գերազանցություն, մենք եկել ենք հեռավոր ապագայից՝ 2025 թվականից, Հայաստան պետությունից։ Ես Անին եմ, իսկ սա իմ եղբայրն է՝ Դավիթը։
Տիգրան Մեծը մտածկոտ գլխով արեց.

- Դա ուրախացնում է իմ սիրտը: Իմացած լինեք, որ ձեզնից յուրաքանչյուրն իր մեջ Մեծ Հայքի ոգին է կրում: Թող ձեր ճանապարհորդությունը լի լինի բացահայտումներով ու ճանաչողությամբ:

Հանկարծ հեռվից ուժեղ դղրդյուն լսվեց:

- Մի՛ վախեցեք, շինարարության ձայներ են: Նոր մայրաքաղաքն է կառուցվում՝ Տիգրանակերտը,- այս ասելով արքան քարե սեղանին դրեց թղթերի կապոցը՝ բացելով այն:

- Դուք տեսնում եք ձեր առջև իմ թագավորության քարտեզը: Սա այսօրվա Հայաստանն է: Հիմա ծաղկման ու բարգավաճման ժամանակաշրջանն է. մեր թագավորությունն ընդլայնվում է մինչև ներկայումս հայտնի աշխարհի ամենահեռավոր անկյունները: Մենք կառուցում ենք քաղաքներ, զարգացնում ենք առևտուրը, իսկ մեր ռազմիկները հայտնի են իրենց քաջությամբ ու վարպետությամբ: Մեզ, սակայն, միայն ռազմական հաղթանակները չեն, որ հզոր են դարձնում: Մենք գնահատում ենք գիտելիքը, արվեստը և ձգտում ենք իմաստության: Մեր գիտնականներն ու փիլիսոփաները նույնքան հարգանք են վայելում, որքան մեր ռազմիկները:

- Ձեր անունը, Ձերդ գերազանցություն, մնացել է պատմության մեջ որպես ուժի և իմաստության խորհրդանիշ,- խորին հիացմունքով ասաց Անին:

Տիգրան Մեծը ժպտաց.

- Պատմությունը կենդանի գետ է, և ամեն սերունդ իր ներդրումն է ունենում դրանում: Ես ուրախ եմ, որ իմ ավանդը շարունակվում է ձեզ պես մարդկանց սրտերում ու մտքերում հազարամյակներ շարունակ:

Թող այս քարտեզն ապագայում հուշի ձեզ, որ ձեզնից յուրաքանչյուրն իր մեջ փառավոր անցյալի մի մասնիկ է կրում, և որ դուք Մեծ Հայքի ապագան եք: Արքան ցույց տվեց պարտեզի մյուս ծայրում գտնվող տաղավարը՝ զարդանախշ փայտյա դռնով:

Անին ու Դավիթը մոտեցան, բացեցին դուռը և հայտնվեցին մի սենյակում, որտեղ շարված էին այդ ժամանակաշրջանի կենցաղի ու արվեստի առարկաներ՝զարդեր, զենքեր և, իհարկե, Տիգրան Մեծի դիմանկարով մետաղադրամներ:

- Այս մետաղադրամները,- սկսեց Տիգրան Մեծը՝ վերցնելով դրանցից մեկը,- միայն փոխանակման միջոց չեն: Սրանք մեր ժողովրդի ու մշակույթի միասնության խորհրդանիշն են: Սրանց վրա ես եմ պատկերված, բայց դա նրանից չէ, որ փառասեր եմ, այլ նրա համար է, որ հիշեցնի յուրաքանչյուր քաղաքացու, թե ինչ մեծ երկրի մաս է ինքը հանդիսանում: Հասկանու՞մ եք, այստեղ յուրաքանչյուր առարկա իր պատմությունն ունի: Զենքը կպատմի ճակատամարտերի մասին, որոնք հաղթել ենք, զարդերը՝ խաղաղության, որը ձգտում ենք պահպանել: Եվ յուրաքանրյուր մետաղադրամ այդ մեծ պատմության մի մասն է, որը կենդանի է մինչ օրս:

Տիգրան Մեծը՝ հզոր ու փառավոր, մեղմորեն դրեց ձեռքը տղայի ուսին:

- Դավի՛թ, երկու հազար տարի է անցել, բայց մեր երկիրը դեռ կա: Շատ ժողովուրդներ չեն դիմացել ժամանակի փորձությանը, բայց մենք կանք: Հպարտացի՛ր դրանով: Դժվարությունները, որ տեսնում ես դու այսօր, ընդամենը փոքրիկ ալիքներ են ժամանակի գետի վրա: Հիշի՛ր, միայն նա կարող է արժանի ապագա կառուցել, ով հիշում է իր անցյալը:

Դավիթի սիրտը լցվեց հպարտությամբ, որ ինքը ևս Տիգրան Մեծի հետնորդն է:

Երեխաները հասկացան, որ հայրենիքի սերը ուղղակի զգացմունք չէ, այլ կրակ, որ ջերմացնում է հոգին և լուսավորում ճանապարհը։
Սիրել հայրենիքը՝ նշանակում է հոգատարությամբ վերաբերվել յուրաքանչյուր տերևի, որ շշնջում է իր պատմությունները քամու ականջին, յուրաքանչյուր պատի, որ կանգնած է ամուր՝ժամանակի փոթորիկներին դեմ հանդիման։ Սիրել հայրենիքը՝ նշանակում է գնահատել մշակույթը, որը գետի պես բերում է իր ջրերը դարերի խորքից՝ թողնելով իրենից հետո հարուստ ավանդույթներ ու գիտելիքներ…
Եվ ահա, կանգնած անցյալի վեհության առջև, երեխաները խոստացան իրենց, որ կպահպանեն իրենց հայրենիքի հանդեպ այդ սերն ու հարգանքը՝ որպես ամենաթանկարժեք գանձ, և կփոխանցեն այն հաջորդ սերունդներին, որպեսզի կրակը երբեք չմարի։
- Ձերդ գերազանցություն, մենք պետք է վերադառնանք դպրոց և այս մասին պատմենք բոլորին։ Ինչպե՞ս կարող ենք վերադառնալ։
Արքան ժպտաց ու ցույց տվեց արձանիկը։
- Այս արձանիկը, որը ձեզ այստեղ բերեց, իրականում մեր ժամանակների թալիսման է, դիպեք նրան և ասեք այն բառերը, որոնք ասել էիք գալու ժամանակ, և դուք կվերադառնաք ձեր դպրոց։
«Ուժ ու պատիվ». այս բառերն այն բանալին էին, որը շրջեց պատմության էջերը դեպի իրենց դարաշրջան։

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ – 6-րդ դասարան

1. Տեքստում գտի՛ր հերոսների դպրոցի նկարագրությունը: Երկու նախադասությամբ նկարագրի՛ր քո դպրոցը:

_____
_____
_____
_____
_____

2. Ի՞նչ նախասիրություններ ունեին Անին և Դավիթը: Դու՞ ինչ նախասիրություն ունես:

_____
_____
_____

3. Դպրոցում ամենից շատ նրանք որտե՞ղ էին լինում, ինչու՞:

_____
_____
_____

4. Ինչպե՞ս հայտնվեցին անցյալում և ո՞ւմ հանդիպեցին:

_____
_____
_____
_____

5. Ի՞նչ կախարդական բառեր պետք է ասեին, դուրս գրի՛ր տեքստից:

_____

6. Գրի՛ր ***մութ, նեղ, բարի, փոքր, դանդաղ, գաղտնի, մեծ, գեղեցիկ, վատ, վեհաշուք*** բառերի հոմանիշներն ու հականիշները:

_____
_____
_____
_____
_____

7. Ո՞ւմ օգնությամբ են Անին ու Դավիթը հայտնաբերում գրադարանի գաղտնիքը:

_____

8. Գրի՛ր հայրենասիրությունը բացատրող տողերը տեքստում:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

9. Նկարագրի՛ր քո հանդիպումը Տիգրան Մեծ արքայի հետ:

_____

10. Ի՞նչ սովորեցիր այս պատմությունից:

_____

_____

11. Գտի՛ր արքային բնութագրող մակդիրները:

_____

_____

12. Ինչե՞րն են մեր ժողովրդի ու մշակույթի միասնության խորհրդանիշները:

_____

_____

_____

_____

13. Ո՞ւմ պատկերն էր մետաղադրամի վրա պատկերված: Տեքստից գրի՛ր արքայի բացատրությունը:

_____

_____

_____

_____

_____

14. Ի՞նչ ցույց տվեց արքան երեխաներին: Քեզ ծանո՞թ էր այն:

_____

_____

15. Ինչու՞ երեխաները գնացին անցյալ:

_____

_____

16. Որ բառը կազմված չէ բառակազմական հետևյալ կաղապարով. արմատ +հոդակապ+արմատ

ա) մետաղադրամ

բ) դարաշրջան

գ) գրադարան

դ) կամարաձև

17. Տեքստից դուրս գրի՛ր երկու նախադասություն, որոնցում կա փոխաբերական իմաստով գործածված բառ:

_____

_____

_____

_____

18. Տեքստից դուրս գրիր բարդածանցավոր 5 բառ

_____

19. Տեքստից դուրս գրի՛ր բաղադրյալ հատուկ անունները.

_____

_____

20. Գրի՛ր տեքստի ***ավանդություն*** և ***հետնորդ*** բառերի հարանունները և բացատրի՛ր այդ բառազույգերի իմաստները:

_____

_____

_____

_____